ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Սոնա Մանուսյան*՝, *Արփինե Մանուսյան*՝՝**

Արժեքները և դրանց դերը սոցիալական վարքի կարգավորման մեջ. Կողմնորոշիչներ ունենալն, անկասկած, մարդու հիմնարար պահանջմունքներից է: Արժեքները մարդկային պատկերացումների և վարքի հարաբերականորեն կայուն կողմնորոշիչներ են, որոնք սահմանում են ընդունելի նպատակները և դրանց հասնելու միջոցները: Դրանք, միաժամանակ, այդ գործողությունների և երևույթների գնահատման չափանիշներ են: Մշակութային արժեքների տեսության հեղինակ, հայտնի սոցիալական հոգեբան Շ.Շվարցը փորձում է տալ համապարփակ սահմանում՝ նշելով, որ արժեքները մարդկանց կյանքում առաջնորդող «վերացական նպատակներ», համոզմունք-սկզբունքներ են, որոնք վերիրադրական են (այսինքն՝ տարբեր իրադրություններում պահպանում են կայունությունը) և ազդում են իրավիճակների մեկնաբանության վրա [1]: Միևնույն ժամանակ, արժեքները խիստ ընդհանուր բնույթ են կրում և վատի ու լավի միայն իդեալական մոդելներ են: Իրական վարքն ուղղակիորեն չի բխում արժեքներից, կարող է չհամընկնել, երբեմն անգամ հակասել վերջիններիս: Մարդուն առհասարակ բնորոշ են վարքային մեծ ճկունություն և իրադրականություն, ինչը ենթադրում է, որ նա բոլոր հնարավոր իրավիճակներում չի գործելու «ցուցված» արժեքների անփոփոխ ցանկով: Դրսևորելով արժեքներին չհամապատասխանող վարք՝ մարդիկ դրա հիմնավորումը գտնում են

՝«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ, ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ.:
՝՝«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

առօրյա իրականությամբ ամրապնդված կանոններում և պատկերացումներում: Որոշակի սահմաններում սա ոչ միայն նորմալ, այլև անխուսափելի է: Քանի դեռ արժեհամակարգը՝ որպես չափանիշների ամբողջություն, առկա է, վարքը ենթակա է հետահայաց գնահատման, և «վատ» գնահատվելու դեպքում քիչ շանս ունի ամրապնդվելու՝ թե՛ անհատի, թե՛ հանրային մակարդակներում: Իսկ երբ անորոշությունը հենց չափանիշների մակարդակում է, խնդիրն ավելի լուրջ է, քանի որ այս դեպքում մարդկանց սոցիալական վարքը սկսում է կարգավորվել ավելի իրավիճակային, էգոյից բխող գործոններով: Այսօրվա հայ հանրության մասին ուսումնասիրությունները և առօրյա դիտարկումները թույլ են տալիս վստահության մեծ չափով ասել, որ խնդիրներ են առկա հենց այս հարթությունում:

Արժեքների վերացականությունն ու ընդհանուր բնույթը, սակայն, չեն ենթադրում դրանց անորոշություն. ինչպես անհատի, այնպես էլ հանրության հոգևոր և պրակտիկ կյանքում դրանք ապահովում են *կյանքի իմաստավորվածության, կանխատեսելիության զգացումը, աշխարհի մասին պատկերացումների հստակության բավարար աստիճանը*: Մարդն իրականության մասին տեղեկատվություն ստանալիս այն դասավորում է արդեն գոյություն ունեցող պատկերացումների համակարգում, կապակցում իր նախորդ փորձին: Այլ կերպ ասած՝ նա պետք է ունենա կյանքի երևույթները մեկնաբանելու և կանխատեսելու հնարավորություն տվող կամ գոնե նման պատրանք ստեղծող «տեսություն»: Մեկն այս հանգամանքը մատնանշելու համար կիրառում է սոցիալական պատկերացումների հասկացությունը (*social representations*, Սերժ Մոսկովիցի), մեկ ուրիշը՝ իրականության կառուցման (ինչպես սոցիոլոգներ Բերգերը, Լուկմանը), մյուսը՝ կոնստրուկտների (ինչպես հոգեբան Ջ. Քելին) և այսպես շարունակ: Օրինակ, Մոսկովիցին ենթադրում է, որ սոցիալական պատկերացումներն անհատի և խմբի համար իրականություն կառուցող մեխանիզմ են. աշխարհի համեմատաբար անհակասական պատկեր կառուցելու պահանջից ելնելով՝ մարդը ձգտում է նոր տպավորություններն «ընտելացնել» (այսինքն՝ դրանք մեկնաբանել ըստ իր ունեցած սխեմաների) և դրանով իսկ անսպասելիության ռիսկը փոքրացնել [2]: Սովորական անհատը, կարճ ասած, չի

կարող իրեն թույլ տալ պլյուրալիզմի շքեղությունը և միաժամանակ ընդունել մի քանի տեսություն. քիչ մարդիկ են, որոնց դա կհաջողվի՝ հոգեկան ճկունության շնորհիվ, իսկ մեծամասնության համար դա ապակողմնորոշող գործոն է: Այս տեսանկյունից տեղին է պարզել՝ ինչ է անում այսօր հայ անհատն աշխարհի այդ անհակասական պատկերը ստանալու համար, ինչպիսին է այդ պատկերն այսօր, և ինչ դերակատարներ կան այդ պատկերի ձևավորման մեջ:

Այսպիսով, արժեքային կողմնորոշիչների անորոշությունն առնվազն մի քանի հետևանք ունի միկրո- և մեզոմակարդակներում, որոնցից են՝

1. փոխհարաբերությունների և անհատի առօրյա վարքի անկայունություն և չկարգավորվածություն;
2. սոցիալական համերաշխության խնդիրներ՝ համընդհանուր կանոնների և տարբեր խմբերի մոտ կողմնորոշումների խիստ տարբերության պատճառով;
3. անհատների ու խմբերի ավելի մեծ կառավարելիություն և խոցելիություն զանազան ազդեցությունների (ներառյալ ինֆորմացիոն) հանդեպ, որոնք պարունակում են արժեքային կողմնորոշման թվացյալ այլընտրանքներ:

Մարդու գործողություններում և մտածելակերպում արժեքների կարգավորող նշանակությունից ելնելով՝ տեղին է պնդել, որ *դրանց հստակությունն* էական է *անհատի և հասարակության հոգեբանական անվտանգության* համար: Որոշակի արժեհամակարգ կրելու մասին պատկերացումը պարզապես անձնային նույնականության մաս չէ: Արժեքային կողմնորոշումները միաժամանակ նաև մշակութային կողմնորոշումներ են՝ սերտորեն կապված կոլեկտիվ ինքնության հարցերի հետ: Դրանք գործոն են ինչպես *սեփական մշակութային յուրատիպության ընկալման,* այնպես էլ *այլ մշակույթներից տարբերակման*, դրանցից հեռավորության կամ մերձության աստիճանի *ընկալման* համար: Ընդ որում, մարդիկ շատ արժեքներ ընկալում են որպես իրենց խմբին ներհատուկ, թեև հիմնարար արժեքներն, ըստ էության, համամարդկային բնույթ ունեն [3; 4], և իրական մշակութա-

յին տարբերություններն արտահայտվում են դրանց հարաբերակցության, «հավաքակազմի» մեջ: Արժեքները հասարակության համակարգում կազմում են հարաբերականորեն կայուն կառուցվածք, որում գործում է հիերարխիայի սկզբունքը. դրանց մի մասը գերակա է, մյուսը՝ ավելի ստորադասված: Այսպիսով, որոշակի արժեհամակարգ կրելու մասին պատկերացումն անձին կապում է իր մշակութային հենքին և հասարակական կյանքին: Ու թեև արժեհամակարգը համարվում է հարաբերականորեն կայուն և փոփոխվում է շատ ավելի դանդաղ, քան, ասենք, վարքաձևերը, այնուհանդերձ, ժամանակի ընթացքում այն ևս որոշակի փոխակերպումներ է ապրում:

Մշակութային փոփոխություններ և արժեքների դինամիկա. Հասարակությունը դինամիկ, ինքնակարգավորվող համակարգ է, որը ձգտում է կայունության, բայց միաժամանակ փոխազդում է արտաքին աշխարհի հետ՝ պարբերաբար նոր տարրեր վերցնելով այլ մշակույթներից: Այս առումով մշակութային սահմանները ոչ թե ընդհատման, այլ համագործակցության գծեր են, որոնք կարելի է համեմատել մեմբրանի՝ ընտրողական թափանցելիությամբ օժտված նուրբ թաղանթի ֆունկցիայի հետ: «Մեմբրանային» ընտրողականություն պետք է նաև արժեքային կողմնորոշումների վրա տարերային և ուղղորդված ազդեցությունների ֆիլտրման համար, իսկ այդպիսի հատկությունը պահանջում է ինքնակազմակերպման բարձր մակարդակ և բավարար «ինքնագիտելիք»: Այլապես ցանկացած այլ խումբ ընկալվում է որպես խորթ, վտանգավոր, իսկ սեփական արժեքները՝ արտաքին վնասակար ազդեցությունների թիրախ, մինչդեռ բովանդակապես ճշտված չէ՝ որոնք են այդ արժեքները և դրանց փոփոխության մյուս հավանական գործոնները: Հայի մշակութային-արժեքային չափման մասին պատկերացումներում քիչ չեն էմպիրիկ հաստատում չստացած, կաղապարային պնդումներ՝ ինչպես հասարակագիտության մեջ, այնպես էլ կենցաղային մակարդակում: Գերիշխում են կլիշեներ՝ և՛ դրական, և՛ բացասական կամ խիստ ընդհանուր կարգի դատողություններ, օրինակ՝ այն մասին, որ մենք գտնվում ենք անցումայնության փուլում, որ մեր արժեհամա-

կարգը փոխակերպվում է: Այդ կարգի դատողությունները դարձել են նաև պոպուլիստական բառապաշարի ակտիվ մաս: Օրինակ, այսօր կատարվող մի շարք անցանկալի հասարակական երևույթներ բացատրելու համար ընդամենը նշում են անցումայնության հանգամանքը, և, ըստ էության, այդ-տեղ էլ կանգ առնում: Արժեքները քննարկելիս մեկ այլ սիրված թեմա է գլոբալացման ու ընդարձակ միջմշակութային շփումների շեշտադրումը: Մշակութային փոխներթափանցումը մարդկությանն ուղեկցում է վաղուց ի վեր, և թեպետ նոր ժամանակներում այն իսկապես նոր թափ է ստացել, այսօր այն փոխարինում է ցանկացած, այդ թվում՝ ներքին ծագման տրանսֆորմացիաների գործոնները հասկանալուն: Սա մոտավորապես նույնն է, ինչ դեռահասի խնդիրները բացատրել միայն դեռահասության ճգնաժամի գոյությամբ՝ չդիտարկելով տվյալ դեռահասի անձի և միջավայրի առանձնահատկությունները: Այս առումով ասել, որ գտնվում ենք անցման մեջ, գիտելիք չի ավելացնում այն մասին, թե ինչպիսին ենք: Ինչպես իրավամբ նշում է Շ.Շվարցը, մշակույթի վրա գլոբալացման ազդեցության մասին խոսակցությունները տեսաբաններին, հետազոտողներին և նաև հասարակ մարդկանց հանիրավի բերում են այն մտքին, որ մշակույթներն արագորեն փոխվում են, իսկ միջմշակութային տարբերությունները՝ հետզհետե նվազում [3, c. 46]: Անշուշտ, շատ բաներ մարդկանց առօրյա վարքում և դատողություններում փոխվել և տարբեր հասարակություններում համահարթեցվել են, բայց սա ուղղակիորեն չի բերում նույնքան արագ փոփոխություններ արժեքային կողմնորոշումների մակարդակում: Բազային մշակույթն ու արժեքներն այդքան արագ չեն փոխվում: Սա կապ ունի նաև մշակութաբանների կողմից առանձնացվող փակ և բաց մշակույթ հասկացությունների տարբերակման հետ. մշակույթի արտաքին, հետազոտողի համար տեսանելի, շոշափելի՝ «բաց» շերտի կողքին կա նաև խորքային, «փակ», այսինքն՝ խոսքային միջոցներով դժվար արտահայտելի շերտը [5]: Այս երկուսը նույնական չեն, և «փակ» մշակույթի տարրերն ավելի կայուն՝ ռեզիստենտ են. այսպիսի տարրերի շնորհիվ հասարակությունը նաև անուղղակիորեն դիմադրում է մշակութային նորամուծություններին: Համարվում է, որ մշակութային դիֆուզիան ամենից արագ տեղի է ունենում նյու-

թական մշակույթում՝ մշակութային արտեֆակտերի ձևով, և ամենից դանդաղ՝ նորմատիվ-արժեքային համակարգում [3; 6]: «Գրեթե բոլոր երկրներում ճանապարհորդները կգտնեն ջինսեր, համբուրգերներ, ռոք խմբեր. բայց արդյո՞ք այդ փոփոխություններն արտացոլում են նաև տվյալ երկրի սոցիալական ինստիտուտների գործառության հիմքում ընկած նորմատիվ-արժեքային կողմնորոշումներ»,- սկեպսիսի մեծ չափաբաժնով հարցնում է Շ.Շվարցը [3, c. 46]:

Ուշագրավ է, որ երբեմն նորամուծություններին, որ պետք է բերեն արժեքային փոփոխություն, ընդունող մշակույթն արձագանքում է «խորամանկությամբ»: Օրինակ, նոր արժեքը, որը ներմուծվում է որպես քաղաքացիական, պետք է ունենա իր համապատասխան վարքային ցուցանիշները: Սակայն երբեմն տվյալ արժեքի զուտ արտաքին կողմը վերցնելով՝ մարդիկ դրանք իրականում գործարկում են ավանդական կողմնորոշումները պահպանելու համար: Այսպես, մեր մասնակցությամբ հետազոտության[1] շրջանակներում հարցված հասարակագետ-փորձագետներից մեկի դիտարկումից եզրակացնում ենք, որ համայնքային ընտրությունները Հայաստանի որոշ գյուղերում *ոչ թե ամրագրում, այլ շրջանցում են ընտրության ինստիտուտը*, քանի որ բացասում են գաղտնիության սկզբունքը և ընթանում են բացահայտ՝ ընտրվող գյուղապետին իրենց լոյալությունը ցույց տալու համար: Փաստորեն, ընտրությունն այստեղ բխում է ոչ թե քաղաքացիական, այլ համայնքային արժեքներից և վերահաստատում է վերջիններս:

Այսպիսով, մշակույթում տեղի ունեցող փոփոխություններից ելնելով՝ վաղ է դատել *մշակութային փոփոխությունների* մասին: Մյուս կողմից, բացառված չէ, որ այսօր շատ վտանգներ կապված լինեն ոչ այնքան սրընթաց փոխվելու, որքան՝ նույնը մնալու և չզարգանալու հետ: Եվ որ ավելի կարևոր է, եղած մշակույթը փոխելը պարզապես դա նորով փոխարինելը չէ: Թերևս, սխալ չի լինի ասել, որ անգամ ծրագրային և տեղեկատվական ազդեցությունները՝ նպատակային կամ տարերային, մշակութային արժեք-

[1] Փորձագիտական հարցազրույցներն իրականացվել են «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցների, այդ թվում հեղինակի կողմից «ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրությունը» գիտական հետազոտական ծրագրի շրջանակներում (ֆինանսավորվում է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից):

ները փոխում են *ոչ այնքան փոխարինելու՝* այլ մշակույթ ձևավորելու, որքան *եղածը «հանելու»* իմաստով:

Մշակութային արժեքները փոփոխական են ոչ միայն ժամանակի մեջ, այլև միևնույն հասարակության մեջ մի սոցիալական խմբից մյուսը: Այդ միջխմբային տարբերությունները կարող են շատ սուր, անգամ բևեռային լինել: Վառ օրինակ է Եվրոպա կամ Արևմուտք հասկացության միանգամայն տարբեր իմաստային և հուզական բեռը մեր հանրության տարբեր շերտերի համար (մեկի համար այն սրտամոտ, մյուսին՝ խիստ խորթ է, և այսպես շարունակ): Ի հավելումն, հասարակական կամ քաղաքական ազդեցության հավակնող խմբեր նույն արժեքները կարող են օգտագործել ու շահարկել տարբեր իմաստներով ու նպատակներով: Ընդ որում, մշակութային կողմնորոշումները փոխվում են ի պատասխան այս խմբերի միջև ուժի/իշխանության հարաբերակցության փոփոխության [3]: Պարզ ասած, որ խումբն ազդեցության ավելի մեծ ռեսուրս ունի, ավելի մեծ հետք է թողնում նաև հանրության արժեհամակարգի ընդհանուր պատկերի վրա: Դժվար չէ նկատել, որ հասարակության արժեհամակարգի մասին խոսելիս սովորաբար նկատի ենք ունենում *ոչ թե* տարբեր շերտերի դավանած *արժեքների «միջինը»*, այլ *գերիշխող խմբերի* արժեքային կողմնորոշումները՝ ամրապնդված սոցիալական կառուցվածքով: Մշակույթը և սոցիալական կառուցվածքը զգալիորեն փոխկախված են: *Մշակութային-արժեքային կողմնորոշումներն* ընկած են հասարակության կառուցվածքային կազմակերպման հիմքում, հանդիսանում են ինչպես *ուղեցույց*, այնպես էլ *արդարացում* սոցիալական ինստիտուտներ ձևավորող գործիչների համար: Սոցիալական ինստիտուտների գործառությունը հետադարձ կապով անդրադառնում է մշակույթի վրա. երբ այդ ինստիտուտները հաջողություն են ունենում, մշակութային-արժեքային կողմնորոշումները, որոնք համահունչ են նրանց գործելակերպին, ամրապնդվում և ուժգնանում են [7; 1]: Արժեքային կողմնորոշումները զգայուն են քաղաքական կառուցվածքի, պրոցեսների ու գաղափարախոսության հանդեպ, որոշակիորեն արտացոլում և մյուս կողմից՝ ձևավորում են դրանք: Նշվածը կարելի է փորձել պատկերացնել օրինակներով: Այսպես, եթե տվյալ հասարակության մեջ ծեր մար-

դիկ բարձր արժեքորում ունեն, դա կարող է համապատասխան կառույցների համար շարժառիթ լինել նպաստավոր սոցիալական քաղաքականություններ զարգացնելու համար և պետք է որ արտացոլվի դրանցում: Իսկ եթե այդ ինստիտուցիոնալ մակարդակում ծեր բնակիչների հանդեպ հոգածությունն անբավարար է, դա ի վերջո հետադարձ կերպով կբերի ծերերի հանրային արժեքորման նվազման: Մեկ այլ օրինակ է աշխատանքի հանդեպ վերաբերմունքը. որքան էլ այն արժեքորվի ընդհանուր դատողությունների կամ հայի ինքնակերպարի մակարդակում (աշխատասեր, քարից հաց քամող ժողովուրդ և այլն), այն դժվար է համարել *գործող արժեք,* քանի որ ինստիտուցիոնալ մեսիջներն այլ բան են ամրապնդում (իմիջիայլոց վերաբերմունք աշխատանքի կատարման որակին, ջանքերի ներդրման, աշխատասիրության խրախուսման բացակայություն և այլն): Կամ, եթե քաղաքացիական որոշ խմբեր դավանում են հավասարության, հորիզոնականության արժեքներ, դա դեռ բնութագրական չէ ողջ հասարակությանը, քանի դեռ արժեքներ ձևավորող հիմնական ինստիտուտներում, օրինակ՝ կրթական համակարգում, շարունակում են գործել ուղղահայաց և ավտորիտար հարաբերություններ:

Այսպիսով, խորքային փոփոխությունները պետք է արտացոլվեն նաև սոցիալական կառուցվածքի և պրակտիկաների փոփոխության մեջ, հաստատվեն դրանց միջոցով:

Արժեքները Հայաստանում. նախնական դիտարկումներ. Այսօր տարածված են ինչպես արժեքների պահպանման, այնպես էլ փոփոխման մասին խոսակցություններ, որոնք, սակայն, մնում են անորոշ, նկարագրական հարթության մեջ: Մեզանում դիտարկվող մի շարք երևույթներ միայն մասամբ կարելի է բացատրել անցումային լինելու և այլ նոմինալ հասկացություններով: Այդ երևույթներից մեկը տարբեր սոցիալական խմբերի բևեռացումն ու փոխադարձ բացասական վերագրումներն են արժեքների տեսակետից: Ինչպես վերը նշեցինք, սոցիալական և մշակութային անհամասեռություն առկա է բոլոր երկրներում, սակայն այնպիսի ինտենսիվ դիսկուրս արժեքների ու հակաարժեքների, սեփական և «սխալ» խմբերի

միջև տարբերության մասին, ինչպիսին այսօր ընթանում է Հայաստանում, ամեն տեղ չես գտնի: Փոխադարձ մշակութային-արժեքային դիստանցիան տարբեր քաղաքացիական և ավանդական խմբերի միջև բավական մեծ է առնվազն ընկալումների մակարդակում: Հիմնական տեսանելի գծերից մեկը լարվածությունը, հակադրությունն է պայմանականորեն անվանվող ավանդականի ու «արևմտյանի» միջև, որ տարբեր մասնավոր հարցերի շուրջ ընթանում է տարբեր ինտենսիվությամբ: «*Գլխավոր խնդիրն այն է, որ ավանդականը և ժամանակակից պոլիտկոռեկտ արևմտյանը հակասության մեջ են գտնվում: Եվ դա արտահայտվում է բոլոր մակարդակներում*»,- մատնանշում է մեր կողմից հարցված փորձագետներից մեկը: Մեկ այլ փորձագետի դիտարկմամբ՝ չնայած վերջին շրջանում անհատի վրա խմբային վերահսկողության որոշակի թուլացմանը, անհատական որոշումների ընդունման հարցում որոշակի ազատականացմանը, «*այնուամենայնիվ, մնում ենք ավանդական արժեքների շրջանակներում, և մեր մոտեցումն առավելապես ավանդական է: Օրինակ, մենք մարդու մեջ շարունակում ենք կարևորել ոչ թե նրա ձեռքբերումի որակները, այլ ի ծնե ունեցածները՝ ում զավակն է, ում բարեկամն է»:* Ակնհայտ է, որ մշակութային փոխակերպումներն այսօր չեն ընթանում գծային կերպով՝ ավանդականից անշեղորեն դեպի ոչ ավանդական: Բազմաթիվ ընդհատումներ, վայրիվերումներ կան, և մեծ իմաստով այսօր ունենք էկլեկտիկ պատկեր՝ գերիշխող արժեքների և վարքաձևերի միջև անհամարժեքությամբ:

Վերարժևորումն օրինաչափ գործընթաց է, բայց տարբեր հասարակություններում այն ընթանում է քանակական և բովանդակային որոշակի տարբերություններով: ՀՀ հանրության արժեքային կողմնորոշիչները հստակ չեն և՛ բովանդակային առումով (որոնք են այդ արժեքները և ինչ են նշանակում), և՛ կառուցվածքի տեսակետից (ինչ համակարգ են կազմում, որոնք են դրանում ավելի առաջնային, որոնք՝ ավելի ստորադասված): Սովորական են դարձել մեկնաբանությունները երկակի ստանդարտներով ապրելու, երկարժեքության, անոմիայի, հակադիր արժեքների գոյակցության մասին: Կան մի քանի հոգեբանական հասկացություններ, որոնք տեղին են նման իրավիճակում հանրության հոգեբանական կայունության

մասին մտորելու համար: Համարվում է, որ *կոգնիտիվ դիսոնանսի* ապրումը (միևնույն երևույթի մասին միաժամանակ իրար հակասող պատկերացումներ ունենալը) և *ոչ կոնգրուենտության* ապրումը (սեփական էությանը և տեսակետին չհամապատասխանող վարքը), քրոնիկ դառնալու դեպքում, մարտահրավեր են անձի հոգեբանական առողջությանը:

Հայաստանի քաղաքացին այսօր խնդիր ունի ճշտել ոչ միայն իր մշակութային-արժեքային աշխարհագրությունը, այլև բացահայտել արժեքային դաշտի բովանդակությունը՝ տարբերակելով անփոփոխ մնացող արժեքային առանցքի, փոխակերպվածի, փոխառվածի և, ինչու ոչ՝ արդեն ժամանակավրեպի միջև: Առօրեական դիսկուրսը թույլ է տալիս դուրս բերել, որ ընդհանուր առմամբ ինքն իրեն այս հարցադրումներն անող հայ անհատը դժվարանում է իրեն «տեղավորել» արժեհամակարգի այնպիսի հայտնի աշխարհագրության մեջ, ինչպիսին արևելք-արևմուտքն է, կամ բնութագրել իր իսկ մշակույթը կոլեկտիվ-ինդիվիդուալիզմ չափումների տեսակետից[1]: Հայ մշակույթ փոխադրվելիս այդ չափումները երկակի մեկնաբանություն են ստանում՝ կախված նրանից, թե կյանքի որ ոլորտի մասին է խոսքը: Այսպես, սեփական մշակույթը բնութագրելիս, ներառյալ՝ քննադատելիս, շատերը մատնանշում են մե՛կ անհատապաշտական գիծը (օրինակ՝ համախմբվելու դժվարությունները), մե՛կ կոլեկտիվիստական հատկանիշները (հասարակական կարծիքից, սոցիալական համատեքստից անհատների վարքի չափազանց մեծ կախվածությունը): Հետաքրքիր է նկատել նաև, որ սեփական ինքնատիպության մասին դիսկուրսում հաճախ գործածվում է «ո՛չ արևմուտք, ո՛չ արևելք»-ի, խաչմերուկում լինելու գաղափարը: Քաղաքակրթական և մշակութային սահմանագծի վրա հայությանը տեղավորելը ևս հաճախակի մոտիվ է հայ երիտասարդության շրջանում (սա, իհարկե, իր հերթին մասամբ ազդված է տպագիր դիսկուրսով, ԶԼՄ տեքստերով և այլն): Տիպիկ արտահայտություններ են՝ «մենք ոչ արևելք ենք, ոչ արևմուտք», «ոչ Ասիա, ոչ՝ Եվրոպա», «և՛ Ասիա, և՛ Եվրոպա», «մենք խաչ-

[1] Հետազոտողները վերջին շրջանում գիտակցել են կոլեկտիվ-ինդիվիդուալիզմ խիստ ընդհանուր բաժանման անբավարարությունը մշակույթի բնութագրման համար և փորձում են ավելի մասնավորեցնել այդ բաժանումը: Օրինակ, միջմշակութային հոգեբան Դ.Մացումոտոն ավելացնում է ևս մեկ չափում՝ առանձնացնելով ուղղահայաց և հորիզոնական կոլեկտիվիզմ և ուղղահայաց ու հորիզոնական ինդիվիդուալիզմ:

մերուկ ենք», «մեջտեղում ենք» և այլն: Նման ինքնընկալումը միայն հայերին չի բնորոշ և դրսևորվում է նաև շատ այլ երկրների (հատկապես՝ Անդրկովկասի, Թուրքիայի) հանրային դիսկուրսում: Այս միտքը փաստական տեսանկյունից այնքան մեծ կշիռ չունի, որքան հոգեբանական հարթության մեջ: «Ոչ այստեղ, ոչ այնտեղ» դիրքավորումը կարող է լինել նաև շփոթի (օրինակ՝ արժեքային կողմնորոշումներում) ցուցանիշ: Չբացառելով, որ «խաչմերուկային դիրքը» կարող է ինքնատիպության մաս կազմել, նման ինքնընկալման մեջ կարելի է նկատել նաև կողմնորոշումների հստակության պակաս: Փաստ է, որ այսօրվա ֆրանսիացին չի դժվարանում իրեն մշակութապես և արժեքաբանորեն տեղավորել Եվրոպայում, կամ իրանցու մշակութային ինքնության մեջ արևելցի լինել-չլինելու հարց չի ծագում, մինչդեռ նույնը դժվար է պնդել հայ անհատի մասին:

Մինչ այժմ գրվածից բխում է նաև *հոչակվող (խոսքային մակարդակում)* և *իրական (գործողությունների մակարդակում դրսևորվող)* արժեքների տարբերակումը, որոնց չհամընկնումը նկատելի է հայ հանրության մեջ: Ա.Թադևոսյանն այս առնչությամբ առանձնացնում է արժեքներ և պսևդոարժեքներ, որոնք իրականում այլ սոցիալ-մշակութային երևույթներ են՝ կոնկրետ սոցիալական խմբերի շահերը սպասարկող [8]: Այսպիսի տարամիտման պատճառների մասին դժվար է վստահ խոսել: Հնարավոր բացատրություններից մեկն այն է, որ հոչակվող արժեքներն այլևս չեն պատասխանում ներկա իրողություններին, «չեն աշխատում», հետևաբար արդեն բովանդակազրկվել են: Միևնույն ժամանակ, մշակութային դիմադրության շնորհիվ դրանք ռեզերվացվում, պասիվ կերպով պահպանվում են, քանի որ մեկ այլ փուլում կարող են կրկին ակտուալացվել:

Արժեքների հետազոտություններ և Հայաստան. Վերջին տարիներին արդեն խիստ աճել է արժեքների հանդեպ հետաքրքրությունը տարբեր բնագավառներում: Պատճառների շարքում են տարաբնույթ լոկալ ու համաշխարհային գործընթացներ՝ աշխարհաքաղաքական և հասարակական վերաձևումները, մշակութային շփումների մեծացումը, ներքին հասարակական խնդիրները, ինչպես նաև տարբեր տեղեկատվական ներգործու-

թյուններ, որոնք բերում են միևնույն հասարակության ներսում անհամաչափ և տարամետ զարգացումների: Մի կողմից, տեղի են ունենում մշակութային փոխակերպման, սեփականի հանդեպ սկեպսիսի ու վերանայման գործընթացներ, մյուս կողմից՝ սեփական մշակույթին «վերադառնալու» միտումներ: Սա տարբեր երկրներում սկսում է ուշագրավ կերպով արտահայտվել միաժամանակ բևեռային բաներ ուզենալու և հայտարարելու մեջ. հանդուրժողականության հոետորաբանություն՝ համադրված էթնոցենտրիզմով, հավասարություն՝ նյութական կուտակման մրցակցային օրենքներին զուգահեռ, ազատություններ՝ ավանդույթները կորցնելու վախերով մեկտեղված, աշխարհիկ արժեքներ՝ կրոնականացման նոր ալիքների կողքին: Այս ամենն առաջ է բերում ինչպես ուրիշ, այնպես էլ սեփական մշակույթը հասկանալու, հետազոտելու անհրաժեշտություն: Տարիների ընթացքում արժեքների հետազոտությունները հետզհետե անհատական մակարդակից անցել են կոլեկտիվ մակարդակ: Ոչ վաղ անցյալում հոգեբանությունը բավարարվում էր առանձին անհատների արժեիմաստային ոլորտի ուսումնասիրմամբ ու այնքան էլ ներգրավված չէր լայնամասշտաբ հետազոտություններում՝ թողնելով դա քաղաքագետներին ու մշակութաբաններին: Իսկ վերջին տարիներին այն դարձել է նման հետազոտությունների լիիրավ մասնակից:

Մշակութային արժեքների ուսումնասիրման մեջ մինչ այժմ ազդեցիկ են այսպես կոչված չափողական մոտեցումները, որոնք սկիզբ են առել Գ.Հոֆսթեդի և Հ.Տրիանդիսի հայտնի մոտեցումներից [9; 10]: Այդպիսի չափումներ են, օրինակ, Տրիանդիսի կողմից առաջ քաշված կոլեկտիվիզմ-ինդիվիդուալիզմը, Հոֆսթեդի առաջարկած *երկարաժամկետ* և *կարճաժամկետ* կողմնորոշումները և այլն: Երկարաժամկետ կողմնորոշումն, ըստ նրա, արտահայտվում է ուղղվածությամբ դեպի ապագան, դեպի պրագմատիկ արդյունքները և բնորոշ է արևմտյան հասարակություններին: Իսկ կարճաժամկետ կողմնորոշումը ենթադրում է ուղղվածություն դեպի անցյալն ու ներկան, դեպի ավանդույթն ու սոցիալական պարտավորությունները, ինչը բնորոշ է արևելյան հասարակություններին: Չափողական մոտեցումների հիմնական գաղափարն այն է, որ մշակութային

զանազանությունը բացարձակ բնույթ չի կրում և չափելի է միևնույն «քանոնով», որից հետո հասարակությունները կարելի է տեղավորել որոշակի չափման համակարգում (առանցք, կոորդինատային համակարգ)։ Արդյունքում ստացվում է ընդհանուր, բայց համեմատելի պատկեր այլ մշակույթներից հեռավորության, մշակութային այս կամ այն գոտում հայտնվելու առումով։ Վերջին շրջանում չափողական հետազոտություններն ընթանում են առանձնահատուկ ինտենսիվությամբ և նոր տեսական մոդելներով։ Դրանցից ամենամասշտաբայինն այսօր արժեքների համաշխարհային հետազոտությունն է՝ ամերիկացի քաղաքագետ Ռ.Ինգլհարթի ղեկավարմամբ։ Ռ.Ինգլհարթը համարում է, որ հասարակությունները կարելի է համեմատել ըստ հետևյալ երկու բևեռային չափումների. 1. ավանդական և աշխարհիկ-ռացիոնալ արժեքներ և 2. գոյապահպանման և ինքնարտահայտման արժեքներ։ Բարձր մատերիալիզմ ունեցող կամ այլ կերպ՝ տնտեսապես չզարգացած հանրություններում գերապատվություն են տալիս գոյապահպանման ու ապահովության արժեքներին (տնտեսական աճ, կայուն տնտեսություն, կարգուկանոնի հաստատում և այլն)։ Իսկ աշխարհիկ-ռացիոնալ և ինքնարտահայտման արժեքները համարվում են, իր իսկ տերմինով, հետմատերիալիստական, այսինքն՝ դրանք բնորոշ են նյութական արժեքների հրատապությունը հաղթահարած, կարճ ասած՝ «լավ ապրող» հասարակություններին [11-13]։ Այսինքն՝ հետմատերիալիստական հանրություններն արդեն իրենց կարող են թույլ տալ հանդուրժողականության, քաղաքացիական իրավունքների և ազատությունների մասին հոգալու «շքեղությունը»։ Տրամաբանությունը պարզ է թվում. այն, ինչ պակաս է, առաջացնում է ձեռք բերելու ձգտում, դառնում է նպատակ, հետևաբար նաև՝ արժեք։ Չնայած այս մոտեցման սահմանափակումներին, Հայաստանի մասնակցությունն այս հետազոտություններին օգտակար է սեփական իրավիճակի ինչ-որ կողմեր հասկանալու համար։ ՀՀ-ն մասնակցել է արժեքների համաշխարհային հետազոտություններին (*WVS*) 1997թ. և 2010թ., ինչպես նաև 2008թ.՝ Արժեքների եվրոպական ուսումնասիրության շրջանակներում (*EVS*, որն օգտագործում է նույն *WVS* մեթոդաբանությունը)։ Հայաստանը *WVS* կայքում քարտեզագրված է դեռևս միայն

1997թ. տվյալների հիման վրա: Այդ տվյալներով՝ ՀՀ-ն աշխարհիկ-ավանդական առանցքում զբաղեցնում է միջանկյալ դիրք, իսկ գոյապահպանում-ինքնարտահայտում առանցքի վրա՝ գոյապահպանման արժեքների միտվածություն՝ այդպիսով տեղավորվելով *Հարավային Ասիա* և *նախկին կոմունիստական* աշխարհագրա-արժեքային դաշտերում[1]: 2010թ. տվյալները դեռ մշակման փուլում են և շուտով համեմատելու ավելի հստակ հնարավորություն կտան: Ինչևէ, տվյալների նախնական դիտարկումը թույլ է տալիս տեսնել, որ 1997թ. համեմատ ավանդականության արժեքները շատ ոլորտներում ոչ միայն չեն զիջել դիրքերը, այլև ավելի են ամրապնդվել, ինչին առանձին կանդրադառնանք մեր հետագա հոդվածներում:

Չափողական մոտեցումները, մասնավորապես՝ արժեքների համաշխարհային հետազոտությունը, մի շարք սահմանափակումներ ունեն: Օրինակ, 1. օգտագործվում են խիստ կոպիտ քանոն և խոշոր ընդհանրացումներ (մատերիալիզմ, հետմատերիալիզմ, հեդմոդեռնիզմ և այլն). դրանք մեծ վերապահումով կարելի է ընդունել որպես ողջ հասարակության բնութագիր; 2. այն գործ է ունենում միջինացված պատկերի հետ, որից դուրս են մնում արժեքների հիմքում ընկած բովանդակային նրբությունները, ներհասարակական տարբերությունները, 3. որպես հարցում՝ այն հիմնվում է մարդկանց պատասխանների և ոչ թե իրական պրակտիկաների վերլուծության վրա, որի դեպքում կարող են նշվել արդեն չգործող, բայց խոսքային կաղապարներով վերարտադրվող արժեքներ:

Ինչևէ, նման հետազոտությունները գոյացնում են հսկայական տվյալների բազա և ճիշտ օգտագործվելու դեպքում ինֆորմատիվ են՝ նույնիսկ սահմանափակումներով հանդերձ: Ինչպես նշվեց, ըստ այս հետազոտության՝ շարունակում են գերակայել ավանդական և գոյապահպանման կողմնորոշումները, իսկ մեթոդաբանության համաձայն, դրանց ցուցանիշների շարքում են այլ խմբերի և փոքրամասնությունների հանդեպ ցածր հանդուրժողությունը, ազգայնական աշխարհընկալումը և այլն: Այսինքն, եթե հասարակագետները կարողանան բռնել վերլուծական և ոչ թե հուզա-

[1] http://www.worldvaluessurvey.org/wvs/articles/folder_published/article_base_54, http://www.worldvaluessurvey.org/wvs/articles/folder_published/article_base_111

գնահատողական դիրք, ապա հասարակության մեջ տեղի ունեցող մի շարք երևույթներին կարձագանքեն ոչ թե հիասթափությամբ, սարսափով, պիտակներով (օրինակ՝ վերջերս շահարկվող «ֆաշիստական հասարակություն»-ը), այլ հաշվի նստելով նմանատիպ տվյալների հետ՝ ստիպված կլինեն եղածն օրինաչափ համարել: Հակառակ դեպքում ստացվում է զավեշտ. քաղաքացիական, հետմատերիալիստական մտածելակերպ է ակնկալվում հենց ավանդականությունն ու գոյապահպանումը մարմնավորող միջին վիճակագրական անհատից: Եվ այդպես հերթական անգամ անհատին թողնում են այն զգացողության հետ, որ ինչ-որ կարևոր հարցում ձախողվել է, բայց ինչն է սխալ արել՝ այդպես էլ լավ չի հասկանում:

Իհարկե, արժեքների համաշխարհային հետազոտություններն արվում են ոչ այնքան մշակույթների վերաբերյալ ճանաչողական հետաքրքրությունից դրդված, այլ միջազգային հարաբերություններում այդ գիտելիքը կիրառելու, տեղական և միջազգային քաղաքականություններ մշակելու նպատակով: Չէ՞ որ արժեքներն արտացոլում են ոչ միայն մշակութային ինքնատիպություն, այլև քաղաքական կողմնորոշումներ: Վերջում նշենք նաև, որ արժեքային գործընթացների մասին խոսելիս ներհասարակական գործընթացների քննարկումը նույնքան կարևոր է, որքան միջմշակութային համեմատումները: Այդ ներքին գործընթացներն ունեն իրենց բովանդակությունը, օրինաչափությունները և տեմպերը, որոնք ոչ միշտ են ուղղակիորեն կապված համաշխարհային գործընթացների հետ: Այդ նպատակով անհրաժեշտ են սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություններ, որոնք կդիտարկեն մակրո-, մեզո- և միկրոփոփոխությունները, արժեքային կողմնորոշումներն ու ապակողմնորոշումները կրող անհատներին: Այսօր Հայաստանում հոգեբանները մեդիա-հարթակներից տարածում են սուբյեկտիվ, հետազոտությամբ չհավաստված, առօրյա մտածողության մեջ արդեն իսկ բավական չարչրկված գաղափարներ մեր մշակութային արժեքների մասին՝ չհղկված քարոզչական երանգներով: Արդյունքում առնվազն երկու բան է տուժում՝ և՛ գիտելիքը, և՛ մասնագիտության կշիռը, բայց սա առանձին վերլուծության խնդիր է:

Հունիս, 2012թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Schwartz S.H.,* Value orientations: Measurement, antecedents and consequences across nations. / In: R. Jowell, C. Roberts et al (Eds.). Measuring attitudes cross-nationally: lessons from the ESS. London: Sage, 2006.
2. *Moscovici S.,* Notes towards a description of social representations. // *Journal of European Social Psychology,* 1988, #18 (3), pp. 211–250.
3. *Шварц Ш.,* Культурные ценностные ориентации: природа и следствия национальных различий // *Психология. Журнал Высшей школы экономики*, 2008. Т. 5, № 2, с. 37–67.
4. *Shweder R.A.,* Relativism and Universalism. http://humdev.uchicago.edu/publications/shweder/Companion-Shweder-finaljan2012.docx, 2012.
5. *Лурье С.В.,* Психологическая антропология: история, современное состояние, перспективы, М., Академический Проект, 2005.
6. *Шостак С.,* Механизмы культурной диффузии *// Социология: теория, методы, маркетинг,* #3, 2005.
7. *Esmer Y., Pettersson T.,* The International System, Democracy and Values, UPPSALA 2009. uu.diva-portal.org/smash/get/diva2:288048/FULLTEXT01.
8. *Թադևոսյան Ա.,* Հայաստանում արժեքային կողմնորոշումների ազդեցությունը հանրային կապիտալի ձևավորման գործընթացին, «21-րդ ԴԱՐ», # 2 (4), 2004:
9. *Hofstede Geert,* Culture's Consequences: comparing values, behaviors, institutions, and organizations across nations (2nd ed.). CA: Thousand Oaks, 2001.
10. *Shweder R.A., When Cultures Collide: Which Rights? Whose Tradition of Values? A Critique of the Global Anti-FGM Campaign. // Global Justice and the Bulwarks of Localism,* 2005, pp. 181-199.
11. *Basabe N., Ros M.,* Cultural dimensions and social behavior correlates: Individualism-Collectivism and Power Distance, http://www.ehu.es/pswparod/pdf/articulos/Basabe1801.pdf.
12. *Ingleheart R.,* Globalization and Postmodern Values // *The Washington Quarterly*, Volume 23, Number 1, Winter 2000, pp. 215-228.
13. *Triandis H.C., McCusker C., & Hui C.H.,* Multimethod probes of individualism and collectivism. // *Journal of Personality and Social Psychology*, 1990, #59(5). pp. 1006-1020. http://jhenner.wordpress.com/2006/10/03/115990988122919281.
14. *Խաչատրյան Ն., Հարությունյան Ս.,* Հայերի մշակութային և արժեքային կողմնորոշումները. միջմշակութային ուսումնասիրություն // *«Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր,* Եր., «Էդիտ պրինտ», 2011:

15. *Захаров А.В.,* Социальные различия и культура, http://sociologist.nm.ru/articles/zaharov_02.htm.
16. *Appadurai Arjun,* "Modernity at Large: Cultural Dimensions of Globalization", University of Minnesota Press, 1997.
17. *Heine S.J., Buchtel E.E.,* Personality: The Universal and the Culturally Specific// *Annual Review of Psychology*, 2009, Vol. 60.
18. *Jiyul K.,* Cultural Dimensions of Strategy and Policy, 2009, www.strategicstudiesinstitute.army.mil.
19. *Kitayama Sh., Cohen D.* (Eds.), Handbook of Cultural Psychology, Guilford Press, 2007.
20. *Whalley J.,* Globalization and values // *CESifo working papers,* #1441, 2005. http://hdl.handle.net/10419/18805.

СОВРЕМЕННЫЕ ЦЕННОСТИ: КУЛЬТУРНАЯ ИДЕНТИЧНОСТЬ И СОЦИАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ

Сона Манусян, Арпине Манусян

Резюме

Статья представляет собой попытку критического анализа и обобщения современных социальных исследований, направленных на выявление содержания и динамики ценностных ориентаций как внутренних измерений обществ. Анализируются факторы возросшего интереса к данной области, а также представляются основные концепции и разработки в западной социальной науке. В статье анализируется роль ценностных ориентаций в регуляции социального поведения и в культурной идентичности, а также нелинейная связь культурных изменений и динамики ценностей. Выявляются перспективы и ограничения методологии современных кросс-культурных исследований применительно к армянской реальности. Анализируя современное состояние знания в области культурно-ценностных ориентаций изменяющего общества Армении, обосновывается необходимость восполнения именно социально-психологического знания в данной области. Намечаются специфические задачи подобных исследований.